ՄԱՐՏՈՒՆՈՒ ԵՎ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՆՏԻԿ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ժ. Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

1968 թ. օգոստոս—սեպտեմբեր ամիսներին, հիմնականում անտիկ և միջնադարյան հուշարձանները ուսումնասիրելու նպատակով, հնագիտական հետախուզություն կատարեցինք Մարտունու և Վարդենիսի շրջաններում։ Կարևոր նյութեր գտնվեցին Մարտունու շրջանի Վարդաձոր (Ադամխան) գյուղից մոտ երկու կմ արևելք՝ դեպի Սևանա լիճն ընկած ոչ մեծ բարձունքի վրա գտնվող կիկլոպյան ամրոցում։ Ամրոցը, որն զբաղեցնում է մոտ մեկ հա տարածություն, ունի կանոնավոր շարված կոնտրֆորսներով պարիսպ[1]։ Ամրոցի հյուսիս-արևմտյան կողմից անցնում է նաև մի երկրորդ պարիսպ նույնատիպ քարերով, բայց ավելի անկանոն շարվածքով։ Հավանաբար այն եղել է հին կիկլոպյան ամրոցի պարիսպը։ Ուրարտացիների գրավելուց հետո (ամրոցի մոտերքում գտնվել է Ռուսա 1-ի արձանագրությունը) բարձունքի վրա կառուցվել է ավելի փոքր տարածություն ընդգրկող կանոնավոր կոնտրֆորսներով ամրոց՝ օգտագործելով հին պարսպի մի հատվածը։ Հյուսիս-արևմտյան մասի քառանկյունի աշտարակն, ըստ երևույթին, կառուցվել է այս շրջանում (պահպանված մասի բարձր. 3,7 մ)։ Ամրոցի ներսում և պարսպից դուրս կան բնակարանների հետքեր։

Նյութական մշակույթի մնացորդները վկայում են, որ բնակավայրը հիմնականում տեղադրված է եղել արևելյան կողմում, ամրոցի մուտքի մասում։ Խեցեղենի բեկորներն առավելապես ուրարտական են, սակայն կան նաև անտիկ շրջանի նյութեր։ Ուշագրավ են ֆիալայի և ջրամանի գունազարդ բեկորները (Աղ. I, նկ. 1, 2)։ Թասի բեկորը թուխ գույնի է, բարձր վզով, նման Կարմիր-բլուրի[2], Ջրառատի[3], Արմավիրի[4] ու Գառնիի V—IV դդ. պատկանող ֆիալաներին։ Ջրամանի բեկորի կարմիր զարդերը տարբերվում են Արմավիրի[5], Գառնիի ու Դվինի ջրամանների շրջանաձև ու ճառագայթաձև նախշերից։ Վաղ հայկական և հելլենիստական միագույն և գունազարդ խեցեղենի առկայությունն ամրոցում վկայում է, որ կյանքն այստեղ շարունակվել է նաև հետուրարտական շրջանում՝ մինչև I դ.։

Գյուղի գերեզմանոցի մոտ հայտնաբերվել է մ. թ. ա. I դ. դամբարանա-

---

[1] *Ամրոցի հանույթը և մանրամասն նկարագրությունը տես՝* Գ. Հ. Միքայելյան, *Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները (Հայաստանի հնագիտական հուշարձանները, I, Երևան, 1968, էջ 31—32, հանույթ № 55)։*

[2] А. А. Мартиросян, Город Тейшебаини, Ереван, 1961, стр. 144—145, *նկ. 68։*

[3] А. О. Мнацаканян, Г. А. Тирацян, Новые данные о материальной культуре древней Армении («Известия» АН Арм. ССР (общ. науки), 1961, № 8, стр. 76 *և հետո, տախտ. 4)։*

[4] Г. А. Тирацян, О расписной керамике древней Армении *(«Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, տախտ. 1, 2)։*

[5] *Նույն տեղում, տախտ. II, 4, 5։*

դաշտ։ Սալարկղային դամբարաններից մեկում գտնվել են մարդկային երկու կմախք, երկու սափոր, բրոնզե ապարանջան և երեք ոսկյա մատանի[6]։

Վարդաձորից ոչ հեռու Ծակքար գյուղի հյուսիս-արևմտյան կողմում Բախտակ կոչվող գետակի ափին հայտնաբերվել է հելլենիստական շրջանի մի բնակատեղի, որի մոտակայքում բացվել են քարարկղային և կարասային թաղումներ։ Ծակքարում 1957 թ. գտնվել է Արտաշես Ա-ի սահմանաքարերից մեկը[7]։

Նկ. 1. Ակունքի ամրոցի արևելյան պարսպի մի հատվածը։

Գյուղի մերձակայքում կան մեծ թվով միջնադարյան գյուղատեղիներ, գերեզմանատներ և այլն։ Առանձնապես հետաքրքիր են գյուղի հյուսիսային մասում, ներկայիս գերեզմանատանը գտնված միջնադարյան նյութերը։ Խեցեղենի բեկորները թույլ են տալիս ենթադրելու, որ այդ մասում VII—XIII դդ. եղել է խոշոր բնակավայր։ Հավանաբար փոքր եկեղեցին կառուցվել է հնի հիմքի վրա։ Ուշագրավ են հարթ և կիսակլոր կղմինդրների բեկորները, որոնք իրենց կատարման ձևերով մոտենում են Հայաստանի մյուս շրջաններում գտնված, ժամանակագրական առումով մոտ, նույնանման խեցեղենին։ Կղմինդրների վրա նշմարվում են կարմիր ներկի հետքեր։

Անտիկ շրջանի հուշարձաններ են հայտնաբերվել Լիճք գյուղում։ 1967 թ. հոր փորելիս բացվել է սալարկղային մի դամբարան, որի մեջ եղել է ապակյա երեք սրվակ, կավե մի փոքրիկ գուլիկ և ոսկրե երեք զարդ։ Ուշադրության է արժանի մանուշակագույն հաստ ապակուց պատրաստված, գնդաձև իրանով երկկանթանի սրվակը, որի ամբողջ փրանն ու վիզը ծածկված են սպիտակ ու դեղնավուն խալերով։ Այն պատրաստված է շաղ տալու նպատակով և առաջին անգամ է հանդիպում Հայաստանում։ Մյուս երկուսը կանաչավուն ապակուց

6 Հ. Մարտիրոսյան, Հնագետի օրագրից («Սովետական Հայաստան», 20. VIII. 1957։

7 Նույն տեղում։

պատրաստված տանձաձև իրանով, ուսիկներով, տեղական ենթադրվող սրբ-վակներ են։ Ուշագրավ են նաև փոքրիկ, կարմիր փայլով պուլիկը և կենդանակերպ գլխիկներով ոսկրե զարդերը. վերջիններս թերևս ունեն նաև պաշտամունքային նշանակություն։ Դամբարանը պատկանում է մ. թ. I դ. վերջերին և II դ. սկզբին[8]։



Նկ. 2. Մաքենյաց վանքը։

Լիճքում բացվել են անտիկ շրջանի այլ դամբարաններ ևս, որոնց նյութերը չեն պահպանվել։ Գյուղի հարավ-արևելյան ծայրին, բլրի վրա ջրամբար փորելիս, 1966 թ. հայտնաբերվել է կավե կոշկաձև մի դագաղ, որը, գյուղացիների վկայությամբ՝ սուջևի մասում ունեցել է կլոր անցք։ Մեզ հաջողվեց տեղում գտնել այդ սարկոֆագի մի քանի բեկոր։ Այն պատրաստված է եղել լավ թրծված բարձրորակ կավից, մակերեսը՝ կարմրավուն, փայլեցված։ 1952 թ. կավե դագաղներ բացվել են նույն շրջանի Լեռնակերտ գյուղի մոտ (Մադինայից հարավ)։ Դրանք ունեցել են ուղղահայաց կողեր, դիակները տեղավորված են եղել մեջքի վրա, վզի շրջանում գտնվել է ուլունքաշար։ Ցավոք՝ այդ նյութերը չեն պահպանվել։ Սովետական Հայաստանում կավե դագաղներ և կոշկաձև սարկոֆագներ հայտնի էին միայն հին Վաղարշապատում[9]։

Կավե դագաղները և սարկոֆագները պատկանում են IV—V դդ., որոնց շատությունը, ինչպես նաև վարպետի դրած նշանները, թույլ են տալիս ենթադրելու նման արհեստանոցի գոյությունը Վաղարշապատում, թերևս նաև Սևանի ավազանի խոշոր բնակավայրերից մեկում։

---

8 Ժ. Դ. Խաչատրյան, Անտիկ դամբարան Լիճքում («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 3)։

9 Աշխ. Քալանթար, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935։

Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. II, Երևան, 1948։



Աղյուսակ I

Կավե դագաղներով թաղելու սովորությունը Հայաստան է թափանցել հավանաբար Միջագետքից, որտեղ հայտնաբերվել են պարթևական շրջանին պատկանող մեծ քանակությամբ կավե դագաղներ։ Կոշկաձև սարկոֆագները, ինչպես ճիշտ կերպով նկատել է Աշխ. Քալանթարը[10], նույնպես գալիս է պարթևներից և Հայաստան է անցել Միջագետքից։ Դրանք նման են Բաբելոնում, Ուռուկում և այլուր հայտնաբերված կավե շքեղ սարկոֆագներին։

Նկ. 3. Խաչքար Վարդենիկ գյուղում (Մարտունի)։

Կավե սարկոֆագներից ոչ հեռու, բլրի վրա, հայտնաբերվեց կարասային թաղում։ Բացվեց մի փոքրիկ անշուք կարաս (բարձրությունը՝ 32 սմ, պսակի տրամագիծը՝ 22 սմ, հատակի տր. 20 սմ), որի մեջ կար մի անշափահաս երեխայի դանդ։ Կմախքը խիստ վատ էր պահպանված, ուստի չհաջողվեց պարզել դիրքը։ Կարասը (աղ. I, նկ. 3) թաղված էր ուղղահայաց վիճակում։ Այն ունի գնդաձև իրան, դուրս լայնացող պսակ, մակերեսը վայլեցված է և երկարատև օգտագործելուց մրոտված։ Փոքրիկ կարասը շատ նման է տնտեսության մեջ օգտագործվող մ. թ. I դ. կճումներին։

Կարասային թաղումները Հայաստանում հանդիպում են ուրարտական շրջանում[11], ավելի ուշ՝ մ. թ. ա. IV—III դդ.։ Գառնիում և Դվինում պեղվել են մի շարք հելլենիստական կարասային թաղումներ, որոնցից մեկում այլ իրերի հետ հայտնաբերվել է նաև Ալեքսանդր Մակեդոնացու արծաթե դրամ[12]։

---

10 Աշխ. Քալանթար, նշվ. աշխ., էջ 51 և այլն։

11 Ըստ պրոֆ. Հ. Ա. Մարտիրոսյանի՝ Արգիշտիխինիլիում (Նոր Արմավիր) հայտնաբերվել են մի քանի կարասային թաղումներ։ Կարասների մի մասը ուրարտական են, մյուսները՝ ուրարտական նյութերով և վերաբերում են մ. թ. ա. VIII դ. կեսերին։

12 Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 64—65, 82։

Մեր թվագրության I դ. կարասային թաղումներն ավելի լայն տարածում են ստանում։ Նման թաղումներ են հայտնաբերվել Գառնիում[13], Վերին Արտաշատում, Սևանի ավազանում, Վայոց ձորում[14] (Խաչիկ գյուղ), Վաղարշապատում[15], Քյուլլուջայում, Նախիջևանի շրջակայքում[16], Լեռնային Ղարաբաղում և այլուր։

Նկ. 4. Գերեզմանաքար Լճակ գյուղում (Վարդենիսի շրջան)։

Կարասային թաղումներ հայտնի են նաև Մարտունու շրջանի Վերին Գետաշեն գյուղում։ Շինարարական աշխատանքների ժամանակ բացված գերեզմաններից մեկի մեջ եղել է երկու կավանոթ, որոնցից միայն մեկը հաջողվեց ձեռք բերել։ Դա մրապատ, թխավուն, գնդաձև իրանով, կարճ վզով, դուրս ծալվող պսակով կճուճ է (աղ. I, 4) բարձր. 12սմ, բերանի տրամ. 9,5 սմ, հատակի տրամ. 8,1 սմ), փայլեցրած մակերեսով։ Այն նման է մ. թ. I դարերի դամբարաններում հայտնաբերված կճուճներին, որոնցից մեծ քանակությամբ հայտնաբերվել են Գառնիում[17]։

Վերին Գետաշենում տարբեր ժամանակներում բացվել են սալարկղային դամբարաններ, որոնց մեջ հայտնաբերված ապակյա անոթները պահվում են Հայաստանի պետական պատմական թանգարանում։ Դրանք մ. թ. I դ. տար-

---

13 Б. Н. Аракелян, Гарни. II, Ереван, 1957, էջ 21, դամբ. №№ 19, 24, 39, 43.

14 Ե. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 73։ Նույնի՝ Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում, («Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», № 3, 1928, էջ 85—86)։

15 Աշխ. Քալանթար, նշվ. աշխ., էջ 40, նկ. 131։

16 Т. И. Голубкина, Находки кувшинных погребений в Нах. АССР (Доклады АН Аз. ССР, т. VIII, 1952. № 8, էջ 451—453), Նույնի՝ Раскопки кувшинных погребений в с. Коша-Диза Нахичеванской АССР (Доклады АН Аз. ССР, т. XIII, № 9, 1957).

17 Б. Н. Аракелян, Гарни, I, Ереван, 1951, 29, Гарни, II, նկ. 16а, б, տախտ. VIII.

րեր գույների ու ձևերի, կաղապարի մեջ աղատ փչելու եղանակով պատրաստված սրվակներ են։ Վերջին ժամանակներս այստեղ հայտնաբերվեց մի նոր դամբարան, ուր կմախքից բացի կար կավե մի սափոր, ապակյա երկու սրվակ, ճարմանդ և ուլունքներ։ Պարզվում է, որ Վերին Գետաշեն գյուղի մի մասը կառուցված է անտիկ դամբարանադաշտի վրա։ Մագինա տանող հանապարհին երևում են ավերված դամբարանների սալերը։

Նոր բացված դամբարանում գտնված կավե փոքրիկ սափորը (աղ. I, նկ. 6) պատրաստված է մուգ ղարշնագույն խոշորահատիկ կավից, ունի քիչ ձգված կլոր կանթ, որի վերին ծայրն ամրացված է եռատերև պսակին (բարձր. 13 սմ, պսակի տրամ.՝ 6 սմ, հատակի տրամ.՝ 4,5 սմ)։

Երևքնուկաձև պսակով անոթները՝ օյնոխոյաները հայտնի են տարբեր երկրներում և սափորների ամենատարածված և ամենից երկար պահպանված ձևերից են։ Հայաստանի տերիտորիայում այն հայտնի է դեռևս ուրարտական շրջանից և լայն տարածում ունի վաղ հայկական և հելլենիստական ժամանակաշրջանում։ Եռատերև սափորների ամենակատարյալ օրինակը հայտնի է Մարտունու շրջանի Ծովինար գյուղից։ Եռատերև պսակով անոթները հասնում են մինչև ուշ միջնադար, սակայն մ. թ. I դ. նման սափորների թիվը մեծ չէ, ուստի Վերին Գետաշենում հայտնաբերվածը հարստացնում է այդ տիպի խեցեղենը։

Վերին Գետաշենի նորահայտ սալարկղում բացված ապակյա անոթներից մեկը ութանիստ կողերով սրվակ է (աղ. I, նկ. 8)։ Այն պատրաստված է տարբեր գույնի ապակուց. վերին մասում՝ բաց կանաչավուն, իսկ հատակի մասում՝ մանուշակագույն։ Սրվակը պատրաստված է կաղապարի (երկփեղկանի) մեջ, փչելու եղանակով։ Երկու գեղեցիկ կանթերը վերին ծայրով կպած են վզի կենտրոնին, մյուսով հենված են ուսերին։ Պսակը լայնանում է դեպի դուրս (բարձր. 6,5 սմ, հատակի տրամ.՝ 1,5 սմ, պսակի տրամ.՝ 3 սմ)։ Նման սրվակներ Հայաստանում հայտնի են Լճաշենից (մանուշակագույն), Սևանից (դեղնավուն) և Քյուլլուջայից (մանուշակագույն)[18]։

Ութանիստ սրվակներ հայտնի են նաև ուրիշ հնավայրերից՝ Վրաստանից[19], Սիրիայից, Պանտիկապեյոնից և այլն։ Նման սրվակների պատրաստման վայրը համարվում է Սիրիան, հատկապես Սիդոն քաղաքը, իսկ ժամանակը՝ I-II դդ.։ Լճաշենի սրվակը հայտնաբերվել է Օդոստոս կայսեր արծաթյա դրամի հետ, իսկ Սևանինը՝ մ. թ. I դ. պատկանող սրվակների հետ։

Վերին Գետաշենի սրվակի կանթերը, ի տարբերություն Լճաշենի, Սևանի և Քյուլլուջայի սրվակների, ստորին մասով հենված են ութանիստ կողերին։ Նման կանթերով սրվակներ հայտնի են Սիրիայում, որոնք համարվում են մ. թ. ա. I և մ. թ. I—II դդ. գործ[20]։ Վերին Գետաշենի սրվակը կարող է պատկանել մ.թ. ա. I դ.։ Այդ թվագրմանը չի հակասում նաև դամբարանում գտնված խիստ ձգված իրանով սրվակը (աղ.I, նկ. 9), որը թերի է (պահպանված մասի բարձր.՝ 4,5 սմ. հատակի տրամ.՝ 1,2 սմ, վզի տրամ.՝ 1,2 սմ)։ Այն

---

18 Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանում գտնված անտիկ ապակու մի քանի նմուշներ (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 12, էջ 75—76, նկ. 1, 2, 6)։

19 Л. А. Чилашвили, Городище Урбнисп, Тбилиси, 1964, табл. XIV, 2.

20 *R. W. Smith*, Glass from the ancient world, New-York, 1957, № 88; *G. A. Eisen*, Glass, vol. I, New-York, 1927, էջ 254, 271, տախտ. 54։

պատրաստված է բաց կանաչավուն, թափանցիկ ապակուց, փչելու եղանակով, հատակը հարթ է, իրանի անցումը վզին՝ սահուն։

Ձգված իրանով բարձր սրվակները լայնորեն տարածված են Միջերկրական ծովի արևելյան ափերին։ Կապտականաչավուն և կանաչավուն ապակուց այդպիսի սրվակներ հայտնաբերվել են Դուրա--Եվրոպոսի I-II դդ. դամբարաններում[21], Կիպրոսում և այլուր։ Նման սրվակներ հայտնի են նաև հռոմեական կայսրության ապակեգործության արևմտյան կենտրոններից։

Հայաստանում ձգված իրանով սրվակներ հայտնաբերվել են դեռևս 50-ական թվականների սկզբին Գառնիի I—II դդ. դամբարաններում[22] և համարվում են սիրիական կամ հարևան ապակեգործական կենտրոնների արտադրանք[23]։

Վերոհիշյալ դամբարանում հայտնաբերվել են նաև բաց կանաչավուն գույնի ապակե ճարմանդ (տր.՝ 2,5 սմ) բարձրադիր գոտիներով, եգիպտական պաստայից առևակոսներով զարդարված մի ուլունք և կարմրավուն, քարե գլանաձև խոշոր ուլունք (աղ. I, նկ. 10—12) (բարձր.՝4,3սմ): Նման ճարմանդներ և ուլունքներ հայտնաբերվել են Գառնիում[24] և Վերին Արտաշատում (I դ.)։

Անտիկ հուշարձանները տարածվում են նաև Վերին Գետաշենից հարավարևմուտք գտնվող լեռնային գյուղերում՝ Մադինայում, Լեռնակերտում, Քարաձիում։ Մագինա գյուղի կենտրոնում հայտնաբերվել են անտիկ դամբարաններ, որոնց մեջ եղել են ապակյա սրվակներ և ուլունքներ։ Գյուղից մոտ 10 կմ հեռավորության վրա գտնվող արոտատեղիներում և գոմերի մոտ կան հին և միջնադարյան դամբարաններ։ Դրանցից մեկում, Քարաձի կոչված վայրում ջրի հոսանքի հետևանքով բացվել են դամբարանների մեծ ու փոքր սալեր։ Այստեղ տեղացիների կողմից բացված սալարկղներից մեկում հայտնաբերվել էր ապակյա երկկանթանի մի սրվակ (III-IV դդ.)։ Մենք պեղեցինք ևս երկու դամբարան, որոնցից մեկի կողքերին դրված էին երեքական սալաքարեր՝ ծածկված մի մեծ և փոքր սալով։ Կմախքն աջ կողքի վրա էր, գլուխն՝ արևմտյան կողմում, դեմքով՝ դեպի հարավ։ Դիակները վատ էին պահպանված, երկուսի մեջ էլ ոչ մի իր չկար։ Այս դամբարաններից ոչ հեռու կիսաքանդ սալարկղից հայտնաբերվել էին երկու ապարանջան։

Ծովինար գյուղում հայտնաբերվել է հելլենիստական շրջանի մի գունավարդ սափոր (I դ.) և դեղնավուն ապակուց պատրաստված, գալարուն զարդերով մի կանթանի սրվակ[25]։

Մի շարք ուրարտական ամրոցներում կյանքը շարունակվել է նաև Վանի թագավորության անկումից հետո։ Դրանցից են, օրինակ Ալբերդը (Գեղհովիտ գյուղում) հիանալի պարիսպներով գողտրիկ մի ամրոց, որի անաղարտ շեր-

---

[21] N. Toll, The Necropolis. The excavations at Dura-Europos Preliminary Report of the ninth season of Work 1935—1936, New-Haven, London, 1946, տախտ. XLIII, գերեզմ. 23—XV, № 1։

[22] Гарни, I, էջ 52, նկ. 44, ձախից 3-րդը, տախտ. 24, աջից 1-ինը։ Гарни, II, էջ 60, նկ. 32, աջից առաջինը, տախտ. 13, աջից առաջինը։

[23] Г. А. Тирацян, О торговых связях Армении с Сирией в античное время («Палестинский сборник», вып. 4 (67), М.—Л., 1959, стр. 75).

[24] Б. Н. Аракелян, Гарни, II, նկ. 56, 57, 58։

[25] Ժ. Դ. Խաչատրյան, Հին Հայաստանի ապակու մասին, էջ 87 և այլն, նկ. 4։

տերը շատ խոստումնալից են հնագետի համար, Ծովինարը, որից ոչ հեռու հայտնաբերվել են անտիկ դամբարաններ, Ծովակը՝ Վարդենիսի շրջանում, որտեղ հավաքած խեցեղենի մեջ կան նաև անտիկ շրջանի անոթների բեկորներ։

Տարբեր դարաշրջանների հուշարձաններով հարուստ է Վարդենիսի շրջանի Ակունք գյուղը։ Գյուղում («գոմերի» շրջանում) և դրանցից հարավ կան բրոնզեդարյան դամբարաններ (մեկը պեղվել է մեր կողմից)։ Սակայն ամենաուշագրավը վաղ հայկական բնակավայրն է, որն իր գոյությունն անընդմեջ պահպանել է մինչև XVII դ.։ Բնակավայրի կենտրոնում բարձրանում է միջնաբերդը (մոտ 2 ha) փոքրիկ բլրի վրա՝ շրջապատված հում մեծ աղյուսներով բարե հիմքերի վրա շարված հզոր բերդապարիսպով (նկ. 1)։ Ամրոցում մասնակի պեղումներ են կատարել Ս. Բարխուդարյանը և Գ. Տիրացյանը։ Միջնաբերդի չորս կողմը սփռված են վաղ հայկական, հելլենիստական, այդ թվում՝ գունաղարդ և միջնադարյան խեցեղենի բեկորներ։ Շինությունների արտաքին նշանները չեն նշմարվում։ Ըստ երևույթին՝ այդ վայրում գոյություն է ունեցել խոշոր բնակավայր, որը կարևոր կետ է հանդիսացել Գոթ-Պարտավ առևտրական ճանապարհի վրա։ Ակունքի հանդերում գտնվում են մոտ տասը գյուղատեղիներ, որտեղ որոշ նյութեր են պահպանվում սկսած XIII դ.։ Գյուղատեղիներից մեկում գտնվել են մոտ XIII—XIV դդ. ապակե դարշնագույն ապարանջան և հախճապակե ուլունք (աղ. I, նկ. 13, 14)։

«Գոմեր» կոչված վայրում, աղբյուրի մոտ, պահպանվել են 13 մեծ քարե տաշտեր, որոնք աստիճանաբար իջնում են ներքև և փոքր ակոսներով հաղորդակցվում միմյանց։ Այս համալիրը լրիվ կապվում է անասնապահության հետ և իր կատարման ձևով ուշագրավ երևույթ է։ Գյուղատեղիում պահպանված նյութերը թվագրվում են XV—XVI դդ.։

Այդպիսի մի հիանալի բնակավայր պահպանվել է Ալուչալու գյուղից (Մարտունու շրջան) 4 կմ հեռավորության վրա, որի կենտրոնական մասում բարձրանում են հռիփսիմյան բնույթի եկեղեցու ավերակները (IX—X դդ.)[26]։ Գյուղատեղիից, գետնի երեսից, հավաքվել են XI—XIII դդ. խեցեղենի (հասարակ և ջնարակած-միադույն) և ապակե ապարանջանների բեկորներ։

Սևանի ավազանի միջնադարյան գյուղաքաղաքներից Մաքենիսը և Կոթը մեծ դեր են կատարել միջազգային տարանցիկ առևտրի մայրուղիների վրա։ Հ. Մանանդյանը ճշտելով Դվին-Պարտավ ուղղությունը, սկզբնական շրջանի հանգուցակետը համարում է Կոթ ավանը, որից հետո՝ Մաքենիսը, որը եղել է միջնադարյան, այսպես կոչված «աղատ քաղաքներից»[27]։ Այժմ Մաքենիսից դրեթե ոչինչ չի մնացել, եթե չհաշվենք Մաքենյաց վանքը (նկ. 2) (Զիչակլու գյուղ)՝ սյունյաց ճարտարապետության հոյակապ կոթողներից մեկը[28]։

Ըստ երևույթին, ավանը եղել է բարեկարգ և ունեցել է իր կոմունալ հարմարությունները։ Ներկայիս գյուղից 5 կմ հարավ «Յոթ աղբյուր» կոչված վայրում

---

26 Ստ. Խ. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 82—85։ Ի դեպ, գյուղատեղիների հարցը մեզանում քիչ է ուսումնասիրված և ցավով պետք է նշել, որ հնկայական համալիրները իրենց լավ պահպանված տնտեսական և բնակելի շենքերով կամաց-կամաց ոչնչանում են՝ օգտագործելի հողատարածություններ ձեռք բերելու և քարը տեղափոխելու անվան տակ։

27 Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները IX—X դդ., Երևան, 1940, էջ 9։

28 Ստ. Խ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 65—73։

գտնվել են կավե փողրակներ (մոտ 50 սմ երկ., 10—15 սմ տրամագծով)։ Եկեղեցու մոտ, դեպի արևմուտք գտնվել են ավելի լայն կավե խողովակներ 30—40 սմ տրամագծով։ Հավանաբար այդ նույն ժամանակաշրջանին է վերաբերում նաև գյուղի մայր առուն, որը տեղ-տեղ վիմափոր է։

Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն գյուղը, որը գտնվում է միջնադարյան Կոթ գյուղաքաղաքի տեղում, հնագիտությանը հայտնի է իր բրոնզեդարյան դամբարաններով, գրանցում հայտնաբերված առաջնակարգ, գեղարվեստական բարձրարժեք նյութերով։ Վերջին տարիներս նույն վայրից հայտնաբերվել են նյութեր, որոնք որոշ գաղափար են տալիս Սևանի ավազանի միջնադարյան արհեստագործության, մասնավորապես կավագործության մասին։ Նյութերը հիմնականում հայտնաբերվել են գետի ձախ ափից՝ «Դիմացի թաղ» կոչվող վայրում։ Շինարարության ժամանակ այստեղ ի հայտ են եկել տարբեր տեսակի կավե ամաններ, որոնցից մեկը խոշորահատիկ կավից, ձեռքով պատրաստված կճուճ է (աղ. I, նկ. 7) (բարձր՝. 11,5 սմ, բերանի տրամ.՝ 12,5 սմ, հատակի տրամ.՝ 5 սմ), փոքր ինչ դուրս թեքված ակոսավոր պսակով։ Իրանն ուռուցիկ է և կրում է փորագիր զարդագոտի։ Նույն զարդը կա նաև հատակի մասում։ Մյուս անոթը ևս ձեռքով պատրաստված կճուճ է (աղ. I, նկ. 5) (բարձր.՝ 7,5 սմ, բերանի տրամ.՝ 7 սմ, հատակի տրամ.՝ 5,5 սմ) բերանի շատ նուրբ մշակումով. ունի երեք ականջաձև կանթ։ Երկու անոթներն էլ թվագրվում են IX—X դդ.[29]։ Վերջին անոթի մեջ գտնվել են արաբական արծաթե դրամներ[30]։ Հետաքրքիրն այն է, որ բացի ամբողջական դրամներից, գանձում առկա են շուրջ մի քանի հարյուրի հասնող տարբեր չափսերով կտրտված դրամակտորներ, որոնք հավանաբար օգտագործվել են որպես մանր։ Նույնպիսի մի գանձ հայտնաբերվել է Մարտունու մոտ, որից դժբախտաբար շատ քիչ բան է մնացել։ Նման գանձերի գյուտը վերստին հաստատում է Կոթ քաղաքի ունեցած դերը միջնադարյան տարանցիկ առևտրում։

Խոշոր բնակավայրերի մնացորդներ են պահպանվել Ծովինար գյուղի շրջակայքում։ Հայտնաբերված նյութերը թվագրվում են 2-րդ հազարամյակի սկզբներից մինչև մ. թ. XIII—XIV դդ.։ Բնակավայրերից մեկը գտնվում է գյուղի արևելյան կողմում, մի բլրի վրա, որը ժամանակին եղել է կղզի և անառիկ ամրոց։ Բլրի վրա հայտնաբերվել են IX—XIII դդ. խեցեղենի օրինակներ՝ կճուճների բեկորներ, բլթակներով կանթեր, Որոտնավանքի բնույթի հորիզոնական կանթեր (X—XI դդ.), ինչպես նաև կանաչ դույնի ջնարակած թասի բեկորներ։

Միջնադարյան խոշոր բնակավայր է եղել նաև բուն Ծովինարում։ Այստեղ գերեզմանոցի շրջանում բացվել էին մեծ շինության հետքեր։ Տեղում պահպանվել էին սյան երեք մեծ խարիսխներ և մի մեծ քարե սանդ, որը շարժական էր և ուներ երկու բռնակ։ Տնտեսական շինության մեջ կանգուն վիճակում մի քանի ամբողջական կարասներ կային, որոնք շատ նման էին Կոթի կարասներին և ունեին քարե կլոր խուփեր։ Ամբողջ համալիրը թվագրվում է XIII—XIV դդ.։

---

29 Ա. Ա. Քալանթարյան, Որոտնավանքի խեցեղենը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» հաս.-դիտ., 1967, № 4)։ Նման խեցեղեն մեծ քանակությամբ գտնվել են Դվինի կենտրոնական թաղամասի IX—X դդ. թվագրվող շերտերում։

30 Գտնվում են Հայաստանի պետական պատմական թանգարանում։

Մենք հայտնաբերեցինք մի հետաքրքիր բնակավայր Ծովինար և Վարդենիկ գյուղերի միջև։ Բնակավայրն ուներ կանոնավոր հատակագիծ, ցայտուն կերպով երևում էին փողոցները, բնակարանները մեծ էին, խոշոր քարերով շարված պատերով, մի մասն ունի՝ քառակուսի հատակագիծ և ներսում՝ տարբեր բաժանմունքներ։ Դտնված նյութերը հիմնականում խեցեղենի բեկորներ էին, մի մասը՝ ուրարտական։

Տվյալ շրջանների հարուստ միջնադարյան նյութերի մի մասը, մասնավորապես նարտարապետական հուշարձանները, կենցաղային քանդակները (նկ. 3, 4), անհատական հուշարձանները և այլն հրատարակված են կամ պատրաստվում են հրատարակության։

Ուսումնասիրությունները վկայում են, որ անտիկ և միջնադարյան շրջանում Սևանի ավազանի այս հատվածը խիտ բնակեցված է եղել։ Տարվելիք ուսումնասիրությունները թույլ կտան ամբողջացնելու և ավելի պարզորոշ դարձնելու այդ պատկերը։

АНТИЧНЫЕ И СРЕДНЕВЕКОВЫЕ ПАМЯТНИКИ МАРТУНИНСКОГО И ВАРДЕНИССКОГО РАЙОНОВ

Ж. Д. ХАЧАТРЯН, А. А. КАЛАНТАРЯН

Резюме

Во время летней экспедиции 1968 г. нами были обнаружены в Мартунинском и Варденисском районах материалы раннеармянской и эллинистической эпох.

Особо выделяются находки из погребений села Личк (расписная керамика, стекло I—II вв.). Были найдены также остатки глиняного саркофага, кувшинные и каменные погребения.

Подъемный материал циклопических крепостей явно указывает на то, что в эллинистическую, а позднее и античную эпоху территория Севанского бассейна была густо заселена и имела тесные сношения с соседними странами, на что указывает ряд импортных изделий.

И в средние века эти районы были густо заселены. В эту эпоху бурный подъем наблюдается в строительстве (сохранились крупные монастырские комплексы), в торговле (найдены несколько больших кладов арабских серебряных монет), развивается ремесленное производство—керамика, металлообработка и т. п.

Остатки крупных поселений сохранились в Цовинаре, Верхнем Алучалу, Варденике, где была обнаружена простая и глазурованная керамика, характерная для IX—XIII вв.